# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

**ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության**

**26.08.2024թ.** **ք.Վանաձոր**

**Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա. Ղազարյանը**
**Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը**

**Մասնակցում էին**

Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը- մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը- մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Ա.Բեջանյանը, Գ.Քարհանյանը, Ա.Թումանյանը, Վ.Ղարսայանը, Մ.Խեչումյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Կ.Ադամյանը, Ա.Մալոյանը- մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

**Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝**

1. Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների կողմից 12.08.2024-26.08.2024թթ. ժամանակահատվածում կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ:

(զեկ. մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Այլ հարցեր

**Ե լ ո ւ յ թ ու ն ե ց ա ն՝**

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը ներկայացրեց ՀՀ ՏԿԵ նախարարությունում 22.08.2024թ. ՀՀ մարզպետների մասնակցությամբ հրավիրված խորհրդակցության և քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես սուբվենցիոն և պետական միջոցներով իրականացվող ծրագրերի ընթացքին առնչվող հարցերը՝ կարևորելով պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի նախագծերին համապատասխան և բարձր որակով ու ժամկետների պահպանմամբ իրականացումը, արձանագրված թերությունների վերացումը: Ներկայացվեցին Լոռու մարզում առկա ճանապարհների հարակից գոտիներում կառուցված շինությունների օրինականության և այդ ճանապարհները սպասարկող կազմակերպությունների գործունեության հետ կապված, ինչպես նաև ՏԻՄ-երի հետ տարվող աշխատանքների և փողոցային առևտրի կանոնակարգման վերաբերյալ, նոր ուսումնական տարվան առընչվող և այլ հարցեր:
2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանը ներկայացրեց մարզում սուբվենցիոն ծրագրերով, ինչպես նաև պետական բյուջեի միջոցներով իրականացված ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն:
3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Բեջանյանը ներկայացրեց ս/թ մայիսի 25-26-ը

տեղացած հորդառատ անձրևների պատճառով տեղի ունեցած աղետի հետևանքների վերացման նպատակով պետության կողմից տրամադրված ֆինանսական միջոցների բաշխման և մնացորդային գումարի նպատակային օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ:

4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Վ.Ղարսայանը ներկայացրեց սուբվենցիոն ծրագրերի, ապօրինաշինությունների, միջպետական և համայնքային ճանապարհների սպասարկման վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:

## Հանձնարարվեց

**1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին և Հ.Ավետիսյանին՝**

Ամենօրյա ռեժիմով վերահսկել Աղետի գոտու հետ կապված աշխատանքների ընթացքը և 2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկություններ քաղաքացիների բնակելի տների, օժանդակ շինությունների գրանցումների ու փոխհատուցումների վերաբերյալ:

**2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին՝**

**2.1** Նախկին հանձնարարականով տրված ապօրինի շինությունների, շինարարությունների կասեցման կամ խախտումների վերացման միջոցառումների վերաբերյալ 2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

**2.2** 2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ մարզում առկա հանրային սպասարկման օբյեկտների հարակից կամ մոտակա տարածքների անցանելիության և խոչընդոտների վերացման վերաբերյալ:

**2.3** Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող բոլոր ծրագրերի՝ շինարարական նախագծերին համապատասխան և բարձր որակով իրականացման, արձանագրված թերությունների վերացման, ժամկետների հստակ պահպանման նկատմամբ:

**3. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

Յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա վերջին օրը նախապատրաստել և ըստ պահանջի ներկայացնել հաշվետվություն տվյալ ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների, թերությունների և առաջարկությունների վերաբերյալ:

**4. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ. Մարգարյանին՝**

**4.1** 2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Լեռնանցք համայնքի լուսավորության համակարգի աշխատանքների ընթացքի և Սպիտակ համայնքի 4 գյուղերի սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ:

**4.2** 2-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն միջպետական և մարզային ճանապարհներին առկա շեղումների և իրականացված աշխատանքների վերաբերյալ (չթույլատրված կոնստրուկցիաներով կառույցներ, շինությունների օրինականություն և ապօրինի հողազավթումներ):

**4.3** Ներկայացնել կոնկրետ, վերջնական և հիմնավորված առաջարկություններ Վանաձորի թիվ 10 դպրոցի մոտակա անցումի անվտանգային համակարգի ստեղծման և շահագործման վերաբերյալ:

**4.4** Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել ճանապարհները սպասարկող կազմակերպությունների գործունեություն նկատմամբ՝ ուշադրություն դարձնելով ճանապարհների պահպանման, պատշաճ սպասարկման, կահավորման և մաքրման աշխատանքներին:

**5. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գ.Քարհանյանին՝**

**5.1** Շահագրգիռ ստորաբաժանումների հետ քննարկումների արդյունքների հիման վրա 2-օրյա ժամկետում ներկայացնել Լոռու մարզի դպրոցներում նախատեսվող շինարարության մասով վերջնական, հիմնավորված և իրատեսական տեղեկատվություն:

**5.2** Անհրաժեշտ հսկողություն սահմանել որպեսզի մարզային ենթակայության ուսումնական հաստատությունները պատրաստված և պատշաճ կերպով դիմավորեն նոր ուսումնական տարին:

**6. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Մ.Խեչումյանին՝**

**6.1** Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքների աշխատակազմերի գործունեության, համայնքների բնակիչների կողմից բարձրացված խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների նկատմամբ, դրսևորել նախաձեռնողականություն, վերհանել թերությունները և բացթողումները, առաջարկել կոնկրետ լուծումներ:

**6.2** Շահագրգիռ և պատասխանատու ստորաբաժանումների մասնակցությամբ քննարկել և ներկայացնել առաջարկություններ համայնքներում փողոցային առևտրի կանոնակարգման ուղղությամբ:

X

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99